Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մայիսի 25-ի N 809 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
փետրվարի 13-ի N 171-Ն որոշման

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՀԱՍՑԵՈՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՆՀԱՅՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ» 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻԱԳՈՒՄԱՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՁԵՎՈՎ ԳԱՆՁՎՈՂ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՀԱՐԿԵՐԸ

NN ը/կ	Անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաները	Սույն չափը գերազանցող մասը համարվում է ապրանքների ակնհայտ առևտրային քանակություն
1.	ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքում դասակարգվող քվադրոցիկլեր, ձյունագնացներ, ձյունաճահճագնացներ, մոտոամենագնացներ և այլ շարժիչային տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված չեն ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկության համար (բացառությամբ ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկության համար չնախատեսված մրցարշավային ավտոմեքենաների)	0
	Մոտոցիկլներ, մոպեդներ, մոտոռոլլերներ, որոնք դասակարգվում են ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8711 ապրանքային դիրքում	1 հատ
	ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 ապրանքային դիրքում դասակարգվող՝ 12-ից ոչ ավելի մարդ՝ ներառյալ վարորդին, փոխադրելու համար նախատեսված շարժիչային տրանսպորտային միջոցներ	0
	ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8704 21, 8704 31, 8704 41 և 8704 51 ենթադիրքերում դասակարգվող՝ մինչև 5 տոննան՝ ներառյալ լրիվ զանգվածով բեռների փոխադրման համար նախատեսված շարժիչային տրանսպորտային	0

	միջոցներ, բացառությամբ՝ բարձր ռադիոակտիվություն ունեցող նյութերի տեղափոխման համար հատուկ նախագծված տրանսպորտային միջոցների	
	Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների կցորդներ	0
2.	Նավեր, օդանավեր, ինչպես նաև նավեր, նավակներ և այլ լողացող նավեր, որոնք դասակարգվում են ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8903 ապրանքային դիրքում և ենթակա չեն պետական գրանցման՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:	1 հատ յուրաքանչյուր ենթադիրքից
3.	ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8703 80 000 ենթադիրքում դասակարգվող թեթև մարդատար ավտոմեքենաներ և այլ շարժիչային տրանսպորտային միջոցներ, որոնք գլխավորապես նախատեսված են մարդկանց փոխադրելու համար և որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչն է (մեկ կամ մի քանի)	0
4.	Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների թափքեր	0

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ